ՇՈԿՈԼԱԴԻ ԲԱՆԿ և ԱՎԵԼԻՆ

Նպատակ

Ամանորին ու Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել աղքատության բարձր ցուցանիշ ունեցող համայնքների երեխաներին և նրանց ընտանիքներին՝ բարելավելով նրանց կյանքի պայմաններն ու ապահովելով զգացմունքային բարեկեցություն:

Գործողություններ

Գեղարքունիքի մարզի 14 գյուղերի մանկապարտեզների 353 երեխաներին նվիրել տոնական շոկոլադ և անչափ անհրաժեշտ անկողնային պարագաներ՝ 109 երեխաներին:

Ծրագրի նկարագրությունը

Այս տարի ևս մենք ուզում ենք արթնանալ Սուրբ Ծննդի առավոտյան՝ ուրախանալով ոչ միայն մեր ընտանիքների ներսում, այլև հանգիստ լինել, որ Հայաստանի հեռավոր գյուղերի սոցիալապես անապահով ընտանիքների փոքրիկները ևս հրաշալի ու ուրախ օր ունեն:

Հայ Օգնության Ֆոնդը 2014 թվականից Հայաստանի տարբեր մարզերում իրականացրել է Շոկոլադի Բանկ հրաշալի ծրագիրը, որին 2017-ից միացել է նաև Այո-ն:

Այս տարի մենք այցելելու ենք Գեղարքունիքի մարզի ամենացուրտ կլիմայական պայմաններ ունեցող գյուղեր՝ Մեծ Մասրիկ, Ակունք, Սոթք, Տրետուկ, Կուտական, Փամբակ, Դարանակ, Փոքր Մասրիկ, Գեղամասար, Արեգունի, Կախական, Շատջրեք, Արփունք և Ավազան, որոնց մանկապարտեզների 353 երեխաների համար տոնական և քաղցր տրամադրություն ենք ապահովելու, ինչպես նաև նրանց համար տաք ու հարմարավետ անկողնային պարագաներ ենք տանելու, որ նրանք ձմեռային ցուրտ օրերին ջերմ ու անհոգ քուն ունենան:

Այս մանկապարտեզներն ունեն քիչ թե շատ լավ պայմաններ: Երեխաներն այստեղ են անցկացնում օրվա գալի մասը: Նրանք մանկապարտեզում սնվում են, խաղում են, զարգանում, գիտելիքներ ստանում, ինչպես նաև հանգստանում են ու քնում: Մանկապարտեզները, սակայն, անկողնայինպարագաների՝ ներքնակների, վերմակների, բարձերի և սպիտակեղենի խիստ կարիք ունեն, իսկ խնդիրը՝ պետք է շուտափույթ լուծել: Վերմակները հին են ու բարակ, իսկ սպիտակեղենը խսիտ հնամաշ:

Ծրագիրը կօգնի, որպեսզի Գեղարքունիքի մարզի երեխաներն անպայման վայելեն իրենց Սուրբ Ծննդյան հրաշքը, ինչպես նաև էլ ավելի բարեկեցիկ պայմաններ կստեղծի նրանց ցերեկային քնի համար, որն այդ տարիքի երեխաների ճիշտ զարգացման կարևոր բաղադրիչներից է:

Շոկոլադ նվիրաբերելու համար այօրվանից սկսած մինչ դեկտեմբերի 25-ը, երկուշաբթիից ուրբաթ, ժ. 09:00-18:00-ը կարող եք այցելել մեր գրասենյակ: Հասցե՝ Հայ Օգնության Ֆոնդ, Մ.Խորենացի 22, Երևան:

Իսկ անկողնային պարագաներիհամար հանգանակությունը կարող եք կատարել առցանց՝ www.weareayo.org

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ
Ներքնակ 1,30 x 70	109	֏9,200	֏1,002,800
Վերմակ 1,30 x 90	109	֏6,300	֏686,700
Բարձ	109	֏1,500	֏163,500
Սավան	109	֏1,500	֏163,500
Տրանսպորտ	2 բեռնատար x 220կմ		֏132,000
Նվերի տոպրակ	193		֏38,600
Լանչ 20 կամավորի համար	2 օր		֏40,000

Փոխարժեքը 2018-ի դեկտեմբերի 14-ի դրությամբ՝ 1 ԱՄՆ դոլար = 480

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ

֏2,227,100